

անիկա նախնական Բանանն էր, ինչպէս
կը ներկայացնէ Ծննդոց գիրքը: Քրիստոսէ
3000 տարի առաջ, Փիւնիկէ բնակաւոր-
ուած է եզրպտականին նմանող ճարտա-
րապետը, յաջողաձեւն, եւ զպտերէնին
նման լեզու մը խօսող ցեղէ մը: Հազար
տարի ետքը, ան կ'ենթարկուի սեմական
արշաւանքին Հիւքսոսներուն, որոնք թէեւ
եզրպտոսի մէջ անցաւոր ազգեցութիւն մը
միայն կ'ունենան, բայց հոն բաւական խոր
հետք կը թողուն, ինչպէս իրենց արուեստ-
ները յետոյ եզրպտոսի մէջ: Բանան տարրը
չ'ոչնչանար սակայն, հակառակ լեզուն

կորսնցնելուն: Ասոր հետեանքն է որ տի-
րապետող ազգի կոչաւ տարրին մէջ երբե-
մըն դեռ կը հանդիպիս սիրուն եւ նուրբ
դիմագիծերու, որոնք հին ցեղին վերն-
ձիւղումն են անշուշտ: Հելլենականութեան
եւ Քրիստոնէութեան շունչին տակ վեր-
կենցաղած այս հին ցեղը յետոյ թէեւ ճրմ-
լուեցաւ խաւամութենէն, բայց նորէն մնաց
երկրին բարոյական կենցաղին հոգին, ինչ-
պէս կը պատահի միշտ, երբ ճարտար եւ
հին ցեղ մըն է որ կը նուաճուի դաժան
եւ տիրապետող ցեղէ մը:

Ե. Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՆԵՑԻ ՊՕՂՈՍ Գ.

ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Շնորհօք եւ յաջողութեամբ ամենագո-
րին Աստուծոյ, ի ՌՄԺԷ (= 1768) ամի
ի ապրիլի ԺԷ: Ես Պօղոս վարդապետ խղ-
ճալի եւ տառապեալս, որ եմ ի նահանգէն
Վասպուրականի, ի մայրաքաղաքէն Շա-
միրամակերտու, ի զարմէ Զարչի Սաչկանց,
թողն մահտեսի հանգուցեալ Սաչաբոյ (որ
կայ թաղեալ ի յԱրապկեր ի Սրբոյ Սաղի-
մայ դառնալն), եւ որդի որդւոյ նորին
մահտեսի Մարգարէին, չարչոյ բարեպաշ-
տի եւ մեծահաւատի: Որ մինչ ծնեալս եմ
ի մօրէս իմմէ պարկեշտուհւոյ Փերուզայ
կոչեցելոյ, ի զստերէ Մաղսուտէ թախի-
եաճեոյ, եւ ի լինելս իմ վեցամսեայ ժամա-
նակաւ՝ մայրիկն իմ համեստ, ըստ վկա-
յութեան տեսողացն, ելեալ է ի կենցաղոյս
եւ հանգուցեալ առ Տէր, որոյ քողցրիկ
հոգւոյն Տէրն ողորմեսցի: Իսկ հայրիկս
մենացեալ իրբեւ զտատրակիկ, թողեալ զիս
եւ զորք քոյրն իմ զԹօյֆախանն (որ միով
տարով մեծ էր քան զիս) առ հայր եւ առ
մայր մօրս մերոյ, ինքն եկեալ էր յուխտ
եւ յերկրպագութիւն սրբոց տեղեաց տնօ-
րէութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-

տոսի ի Սուրբ յերուսաղէմս, կատարելով
զուխտն իւր յաւուրս երանեալ հայրապե-
տին Գրիգորի մեծ վարդապետի, աշակեր-
տի Վարդանայ վարդապետի Բաղընցոյ:
Որ եւ հարեալ էր հայրիկս ի սէր սրբոց
տեղեացս, ի սէր սուրբ պատկերաց Աս-
տուածածնի, որ ի վերայ երկուց սիեանցն
Սուրբ Յակոբայ կայ՝ զկնի երկուց դասուցն,
եւ ի սէր երանելոյն, այսինքն Գրիգոր պա-
տրիարկին: Որ եւ եկն եւ քանի տարի սը-
նոյց զմեզ խիստ տաժանմամբ, զի ոչ ե-
մուտ միւսանդամ ի կարգ աշխարհի, այլ
կայր իրբեւ զկրօնաւորսն յանապատի ըստ
ամենայնի, մինչեւ եմոյժ զքոյրն իմ ի
կարգ աշխարհի: Եւ վաճառեալ զամենայն
որ ինչ կայր ի խանութն, տալով զբա-
ժինն եւ զճիւղէզն քեռն իմոյ ըստ բաւա-
կանի իւրն կարողութեանն, եւ զիս առեալ
ընդ իւր, ի ՌՃՀԵ (= 1726) Հայոցս թը-
վին, բաղում տէրունական ուխտաւորօք
մտանել ի սուրբ քաղաքս առ սիրահարքն
իւր: Որ եւ ի ճանապարհին քեռն մեր եւ
ընդ մեզ հացակից եղելոց քաղաքակցաց
մեր՝ ի գետն Մալաթիոյ, որ առաջի թուի-
մայ զիւղին էր ա(ն)ջքըն, ընկղմեցաւ, յո-
րում գոյր սակաւ ինչ փող մեր եւ ձմ
(150) քիւլիչէ էպրիք Թէվրիկոյ: Իսկ ըն-
կերացն մեր բաղում զբամբ գոյր, զի
հայրիկս առ ինքն ունէր կարեալ զոսկիսն,
եւ վճռական խօսքն հօրս էր այս՝ թէ իմ
ապրանաց մէջն անիրաւ ստացուածք ոչ
գոյր, բայց միայն մէկ կարպետ ի Թէվրի-
կու բերեալ թալանէն, զոր առի աժանա-

զին՝ երեք ապասի, այն ի վերայ բեռին գոյով տարաւ զմիւսքն: Արդ թէպէտ ի ՌձՀԵ (=1726) թվոյն ելաք, բայց ի ՌձՀԶ (=1727) թվոյն ի Բերիեայ մտաք, և անտի ի Դամասկոս, որ և անդ գոյին զուամարեալ բազմութիւնք ուխտաւորաց, որովք եղաք ողիք էձ (700), մեծ և փոքր յամենայն քաղաքաց և կողմանց ժողովեալք ի մի: Եւ գլխաւորքն էին՝ Մշու Գլեկկայ վանուց Սուրբ Կարապետի ճգնազգեսաց առաջնորդ Տէր Արքաճամ արքեպիսկոպոսն, որ էր հօրեղբոր որդի Գրիգորի երանեալ պատրիարքի և ձեռնասուռն աշակերտ նմին (որ զինի վախճանի Կարապետի կաթողիկոսի Գաղատացւոյ, որ իսկն Զէյթունցի էր, նստաւ կաթողիկոս ի Սուրբն Էջմիածին, և ՌձԶԳ (=1734) և ի նոյնմբեր ամսոյ ԺԱ հանգեաւ ի Քրիստոս), նաև Պաւլաօցի Յակոբ վարդապետ նըվիրակն Թաթաւ, Գարբիէլ վարդապետ նըվիրակն Ակընայ (աշակերտք Գրիգոր պատրիարքին) որ եղեւ վէքիլ նոյնոյ երնելոյն և զինի վախճանին տարին ի Պօլիս և զիտացուցին ի Պրուսա, որ անդ հանգեաւ և թաղեցաւ, Երեմիեայ վարդապետն Կարնեցի Մաղմանօղլի կոչեցեալն ի Կարնոյ նըվիրակութենէ, ահանջատ Մարտիրոս վարդապետն Բերիացի, Յարութիւն վարդապետն Գերմանիկու, և այլք ի մէջ աշխարհականաց էին բազումք զորս ոչ է ի մոխ, բայց միայն Արապկերցի մահտեսի Սիրակոն աղայն, որ և զիւր ընտանիքն թախտրաւանով երբ և տարաւ: Եւ այլք բոլորքն երկվարօք, զինուք, վրանօք, էլքէնտէզօք, եէտէկօք և անասելի զարդուք ընդ Ատրմօղլի Իսմայիլ ալուշան շատագանձ սատէթլի փաշա էֆէնտիին եկեալք ի Դամասկոսէ բազմօրեայ ժամանակօք սակս շատութեան անձրիին՝ հասաք խոր խաղաղութեամբ մինչև ի նոյն, որ զբազմութիւն զօրաց զնկով ընդ մեզ՝ եկեալ ուրախութեամբ հասաք ի սուրբ քաղաքս, հանգչեալով ի զոգ ծնօղիս մերոյ, մայր որդովք բերկրեալ: և զայլսն ընթերցող սիրելիք իմասջիք զԳրիգոր հայրապետին և զԱրքաճամ երջանկին և զայլոցն զյնձութիւնս անպատմելիս: Որ և կատարեալ զուխտս մեր, սակայն ծնօղս իմ ոչ կամեցու ալ բաժանիլ ի սրբոյ քաղաքէս և զվերոյ յիշելոցն, վասն որոյ ի մնալն Տնառն

Արքաճամու վարդապետին հարկեցուցմամբ պատրիարքի սրբազանի, մնաց և հայրիկս իմ ինչ՝ միջնորդութեամբ սրբազան Արքաճամ վարդապետին և նորին աղաշանօքն: Եւ զի յայնմ ժամանակի ի մէջ Սրբոյ Աթոռոյս փոքրիկ տղայ ոչ թողուին միաբան մնալ, զի մեք յայնժամ ըստ ասիցն հօրս էաք Ժ. ամեայ, որ և Դ տարի մնացաք: Հայրիկս երբեմն ներսի պարտէզի պարտիզպան և երբեմն Սուրբ Հրեշտակապետի վանացն ժամակոչ, և խղճուկս տղայ զուով երբեմն առ Սուրբ Յարութեան ընէյիզ Յովհաննէս վարդապետն և երբեմն առ Սուրբ Հրեշտակապետի ընէյիզ Տէր Մարտիրոսն Բաղլընցի, (որ էր յաշակերտացն վարդանայ վարդապետի և համիրակ Գրիգոր պատրիարքի և Յովհաննէս ընէյիզ վարդապետին) սակաւիկ ընթեռնըով, զի մինչ տղայ էի իբրեւ զտղայ եայլն: Իրաւի հոգեւոր ծնօղքս հանդերձ երանեկեալ պատրիարքաւ, որ վասն Արքաճամ վարդապետի խաթերն, որ յոյժ աղերս էր արաբեալ վասն իմ, և այն վասն հօրկանս մահտեսի Մարգարէին՝ զի նախածանօթ բարեկամ էր նմին, այսինքն Արքաճամ վարդապետին, և մարմնաւոր ծնօղ հայրիկս շատ և շատ նեղութիւնս կրեցին մինչ ի Դ տարին, որ զիսկապէսն ժամանակակիցքն պատմեն նարդենիս, որոց Տէր զհոգիսն լուսաւորեսցէ և երկնից արքայութեանն արասցէ արժանի, ամէն: Իսկ ի ճուլուսին սուլթան շէվքէթլի Ահմէտին և յարքայանալն բարեսէր արքային սուլթան Մահմուտի որդւոյ սուլթան Մուստաֆային, եկն եղբայր հօրս իմ մահտեսի Մալխաս աղայն յուխտ, և յոյժ բռնադատեաց ըզհայրիկս տանել, սակայն հայրն իմ առաքինասէր գնացեալ անկաւ առ ոտս սրբազան պատրիարքին, որ պատասխանեաց մահտեսի Մալխաս աղային՝ թէ ի խղճուկ եղբորէդ ձեռք վեր կալ, այսուհետե ոչ քեզ և ոչ աշխարհի է պիտանի, զոր քաջ գիտես զվարս և զբարս զորա: Եթէ կամիս զորդին առ և զնա և արա որպէս կամիս: Եւ այս վասն այն զի ինքն պատրիարքն երանելի և հայրիկս և ամենեքեան ի ձեռացս մնացնն ազատ, վասն որոյ հօրեղբայրն իմ արար ըստ նոյնի կամացն, զի ինքն մի որդեակ ունէր Միրզախան անուն վեցամեայ փոքր քան զիս:

Եւ առեալ տարաւ ընդ իւր ի Վան, որ ի յայն ամի Թէոդորոս վարդապետն խորհնացի (որ զկնի Յակոբ պատրիարկին եղև պատրիարկ սրբոյ քաղաքիս և ես ի նմանէ առի զքահանայականն զկարգն սուրբ) ընդ մեզ գնաց յԵւդոկիեայ նըվիրակ: Որ եւ մեք եղաք ի Վան քանի տարի մնալով, որ ըստ ամենայնի զգուեցայ յամենայնէ, որ զոր ինչ որ կամեցան թէ՛ մահտեսի Մալխաս աղայն և թէ իւրայինքն, որ առաւել քան զԵրեանցն որդին սիրէին և պատուէին զիս, թէ՛ քոյրն իմ հոգեւէր և թէ ալլքն, սակայն ոչ կամեցաք և ոչ ի կամս նոցին և ի խնդիրս խոնարհեցաք: Եւ ի միում զիշերի ի վերնատունն մերձ առ հօրեղբայրն իմ և առ սիրելի Միրզախանն մինչ ննջէի, տեսի երազ՝ զի հայրիկն իմ բազմաշխատ մտեալ և եղեալ կայր ի դադաղոջն, եւ ես լայի անմխիթար, սակայն լացն իմ ոչ եթէ տեսութեամբ երազոյն, այլ ստոյգ արտասուաց իջուցմամբ և ձայնիւ աղաղակաւ եղեալ, որոյ վասն ամենեքեան ընդոստուցեալ թաքեալք ի վերայ իմ ձայն տալով հագիւ ուրեմն արթընացուցին զիս, որ և տեսի զի թացեալ յարտասուացն և կարկամեալ հարցին թէ վասն է՞ր լաս: Ասացի զտեսեալս: Պատասխանեցին՝ թէ մի՛ երկնչիր, շատ ապրելոց է: Սակայն այլ առաւել սկսայ լալ, մինչ զի եւ նոքա լացին. և մինչ ներարտասուաց կայաք ամենեքեանքս, եկն ուխտաւոր սուրբ քաղաքէս եւ գրեանք բաղումք նոցա և ինձ, և որդեկարօտ հօրկանէս՝ նոցա թէ ժամ մի յառաջ զիմ որդին յղեցէք, ապա թէ ոչ ի կարօտոյս մեռանիմ, իսկ ինձ, թէ ոչ գաս՝ իմ օրհնութենէս և յԱստուծոյ զրկիս: Որպէս տեսն՝ կոյրն զինչ խնդրէ, երկու աչք. վասն որոյ այլ նոքա ոչ կարացին արգիլել, զի յաստուածակոյս կողմանէ իմացան զայն, որ և զինչ որ ի պահեստի եղեալ էր հայրն իմ առ հօրեղբայրս և առ քեզս՝ առեալ վաճառեցաք և յամենայն իրաց դատիլախայ եղեալ, ընդ ուխտաւորացն մեր երկրացոց ի ՌՃԶԲ (= 1733) թվոյն և ի տօնի կատարման Յակոբայ Մըծրընայ հայրապետին զկնի, երկուշաբթի օրն Աստուծով ելաք ի Վան քաղաքէն մեծաւ խնդութեամբ և փառօք, որ և ՌՃԶԳ (= 1734) և ի մեծ պահօց ընդ Հրվրուկեան մահտեսի Յա-

րութիւն աղային, ընդ Հինտու նըվիրակ Ահարօն վարդապետին Զուղայեցոյ, ընդ Ղըպրուզցի Յարութիւն վարդապետին՝ նըվիրակին Բերիոյ մտաք ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, որ և յայւմ ամի ի Պօլսոյ եկեալ էին յուխտ աշակերտքն Յովհաննէս պատրիարկի մեծին Պօլսոյ սրբոյ տանս այցելուի՝ Յակոբ վարդապետն, որ Աստուածաբան կոչեցաւ ի Գրիգոր պատրիարկէն (որ յետոյ եղև Պօլսոյ երկիցս պատրիարկ եւ սուրբ քաղաքիս մի անգամ՝ երկու ամ), Յովհաննէս վարդապետն Կեսարացի մեծ զիտնականն (որ և մեք դարտաքինն ի նմանէ առաք դաս և եղև բազմաց լուսաւորիչ, որ Տէր պահեսցէ վասն մեր), Պօղոս վարդապետն և ալլք: Նաեւ Թէոդորոս հայր վարդապետն եկն մերձ Մաղկաղարդին, բերելով զնըվիրակութիւնս յԵւդոկիոյ, այլ և զեղբայրն իմ զտիրացու Յովհաննէս Գանձակեցի, որ ձեռնադրեալ անուանեաց Կարապետ, որ զկնի իւրն նըստաւ յաթոռ պատրիարկութեանն և եղև մեզ նախորդ պատրիարկ սրբոյ աթոռոյս ի ՌՄԺԱ (= 1762), եւ ի ՌՄԺԷ (= 1768) Յունվարի ԻԴ հանգեաւ ի Տէր: Որ և ընդ քաղցրիկ ծնող հօրս քանի ամիս մնացաք ի Սուրբ Մնունդն Գրիստոսի և Դ տարի ի մէջ Սուրբ Յարութեանն, սեւալ առ ռոս նորին ընէյիզի Յովհաննէս վարդապետի քեռ որդւոյ Աստուածատուր վարդապետի (որ վերջն եղև ընէյիզ Սուրբ Յարութեանն և մեծ լուսարար Սուրբ Յակոբայ, որ էր յոյժ սիրեցեալ յաշո Գրիգոր պատրիարկին երանելոյ), որ և ըստ մերն կարեաց սպասաւորութիւնս արարաք զպրութեանն և սարկաւագութեանն: Իսկ զկնի Դ տարւոյ եւ կարդաւոր լինելոյս ներ սուրբ աթոռոյս՝ Դ տարի ձախակողմեան դասն ժամ ասացաք, հրաւիրակութիւնս արարաք, զգլըքատունն շահեցաք տիրապետելով, լուսարարին Սուրբ Յակոբայ օգնեցաք, եւ այլ զոր ինչ որ հրամայէր մեզ երանեալ հայրապետն Գրիգորիոս միջնորդութեամբ լուսարար Աստուածատուր հայր վարդապետին՝ անտրտունջ կատարէաք: Որ և ի ՌՃԴԳ (= 1744) ամին ի բնիկ երկիրն մեր ի Վան նորին հրամանաւ նըվիրակ գնացեալ, բաղմորայիւք ի ՌՃԴԷ (= 1748) թվոյն եկեալ պարզերես առաջի սրբազանին առաք զկատարեալ զօրհնութիւնն,

որ նոյն երանելին հաւն իմ Գրիգոր պատ-
րիարքն ի ՌՃՂԸ (= 1749)ին և Փետրվարի
փոխեցաւ առ Տէր, որոյ զհոգին լուսաւո-
րեացէ Տէր երկնայնով լուսով: Զկնի գնա-
ցաք հրաւիրակ ի Պօլիս և եկաք, և հրա-
մանաւ Յակոբ պատրիարկի սրբոյ աթոռոյս
գնացաք նվիրակ յնւղական և ի Սուրբ Էջ-
միածին հրաւիրմամբ Մինասայ կաթողի-
կոսի Ակընցւոյ, և և զգործն կատարեալ՝
Աստուծով եկաք ի սուրբ գահս յաւուր
Թէոգորոս պատրիարկին: Որ և զկնի մի
տարւոյ յղեաց զմեզ ի յիշմելուն Լիկայա-
ցոյ, որ է Փոքրն Ասիական, որ և մինչ էաք
ի Նիկիամիդեայ՝ լուսաք զմահն Թէոգորոս
պատրիարկին, որ և լրացուցեալ զգործն
Աստուծով, ընդ Պօլսոյ նաւի Թ վարդապե-
տովք եկեալ մտաք ի սուրբ գահս՝ մեր սի-
րելի Հաճընցի Սարգիս հրաւիրակ վարդա-
պետիւ, որ և զմեզ յոյժ սիրով ընկալաւ
կարապետ պատրիարկ եղբայրն իմ, ծե-
րունիքն բոլոր և եղական սիրելի եղբայրն
իմ Եւդոկիացի Սարգիս արքեպիսկոպոսն
Ֆէրմանպատէ կոչեցեալն, որ և սիրով ըզ-

լուծն դարպասի վերակացութեանն ի պա-
րանոցն մեր անցուցին, և մեք Աստուծով
և օթանդակութեամբ եղբարց ի ՌՄԺԱ.
(= 1762) ի Հոկտեմբերի ԺԳ օրէն մինչ ի
ՌՄԺԷ (= 1768) և ի յԱպրիլի ամիսն ի
յանգ և ի յաւարտ հասուցաք: Եւ ի լի-
նելն մեր պատրիարկ կամեցողութեամբն
Աստուծոյ և ստիպմամբ բոլորից, որպէս
զրեալ եմք ի մեծ տէֆտէրոջն տարեկանի
իրատի և մասըրաֆի ըստ ամենայնի, զմեր
սիրելի զեղբայրն զԵւդոկիացի Սարգիս աս-
տուածարան վարդապետն եղի դարպասնի
բերելով յիշմելուն ընդիրակութենէն, մինչ
չն էր զգործն զայն կատարեալ վասն հար-
կաւորութեանն, որ և նարդենիս յաւե-
լացուցաք նաև զվէքիութիւնն ի վերայ,
զի միւսն ինքնին հրաժարեցաւ, և Տէր Աս-
տուած իւրն և օգնականաց և ամենայն
մտերիմ զործակալաց և բոլոր միաբանից
կարօղութիւն տալէ և վարձահատոյց լի-
ցի, ամէն:

Հրատարակեց Մ. Ե. Ն.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱԽՏԱՆԳ ՈՐԴԻ ՈՒՄԵԿԱՅ ԵՒ ՆՈՐԱ ՏՈՂՄԸ

Պ.

Ումեկեան տոհմը, այսպէս անուա-
նենք Վախտանգի հօր անունով, որ ա-
մենից յայտնի ներկայացուցիչն էր, արեւ-
ելեան Հայաստանի բնիկ իշխաններից
էէք, այլ եկուոր Մանազկերտի շրջանից,
այս մասին մեզ մանրամասնութիւններ են
տալիս Վարդան և Գանձակեցիք: Առաջինը
յայտնուեմ է 1242 թուականի համար. «ի
վեցհարիւր իննսուն և մի թուին Հայոց Բա-
չու նուինն փոխեաց զիշխանութիւն Զար-
մաղանին և էառ զկարնոյ քաղաք՝ հանեալ
անտի դայրն երեւելի, մեծատուն և եր-
կիւղած ի Տեառնէ զՈւմեկն և զազգականս
նորա՝ զորդիս պարոն Յոհաննու զՍտեփան-
նոս և զեղբարսն իւր հինգ» (*): Ուրիշ
աղբիւրից էլ գիտենք, որ Թաթարների ար-

շաւանքը գէտի կարին և Փոքր Ասիայի
քաղաքները՝ կեսարիա և այլն սկսուած էր
1242 թուին. Գրիգոր Դոփեան, որ միւս
հայ իշխանների հետ՝ Աւագի գլխաւորու-
թեամբ՝ մասնակից էր այդ արշաւանքին,
պատմում է անձամբ մի յիշատակարանի
մէջ (*):

Իսկ Գանձակեցիքն առանց թուականը
յիշելու Ումեկի հիւսիսային Հայաստան
փոխադրուելն ու Տփլիսում հաստատուելը
կապում է թաթարական հարկապահան-
ջութեան պատմութեան հետ, որ կատա-
րուել է Մանգու խանի հրամանով «յոթն
հարիւր և երեք թուականին Հայոց» (= 1254). թուելով հարկապահանջութեան ծա-

(*) Էմինի հրատ. Մոսկվա. 1861 երես 193:

(*) Օրթաքիլիսայի (Լենինականի մօտ) աւետա-
րանի պահպանակ մի Զեռադիրների Յիշատակա-
րանների ժողովածու, անտիպ: